տեղն պիտի բարձրանայ, այս տեղ «Չարչարում» կասուի:

Մօլլա-Սիւլէյմանցի մի Սուքիասանց կողմից $4\ {}^{1}/_{2}$ ժամէն՝ իսկ ուրիշ մի $2\ {}^{1}/_{2}$ ժամէն բարձրացեր է մեծ Սուկաւէտի գլուխն հիւսիսային կողմից: Աւելի դիւրին է փոքր Սուկաւէտի գագաթի չարչարման ճանապարհով բարձրանալ: Գագաթը երկու արտաւար տափարակ մի կայ, նաև ճգնաւորի հիւղեակներ կան, ուր կաւեայ ճրագներ տեսնուած են և վայրի ոչխարաց եղջիւրներ: Հարաւային երեսն բոլորովին անբոյս է, այս կողմ կը տեսնուին երեք ձորակներ, որք լերան կիսուն վերայ իրար կը խառնուին:

Այս լերան ստորոտներն առատ աղբիւրք կը վըլտան, ամէն կողմ գեղեցկագոյն մարգագետիններ կերևին:

Հիւսիսային ստորոտներն այրեր կան, ուր երբեմն բնակութիւն հաստատուած է: Այս այրերու մօտ կասեն խաչ քար մի կանգնած է, վերան ունի արձանագրութիւն, որ կարծեմ բևեռագիր լինելու է:

Յայս վայր, ընթերցողք, տեսանք վեր ի վերոյ նկարագրութիւն Ս. Սուքիասանց վրայ, մի քանի հատուած ևս Չամչեանից առնելով կը ներկայացնեմ:

«Ընդ այն աւուրս . . . Թադէի աշակերտք նորա ոսկեանք ճգնաւորք . . . եկին յԱրտաշատ քաղաք և քարոզեցին զհաւատս Քրիստոսի, զորոց զբանսն ընկալեալ ոմանք յազգականաց Թագուհւոյն՝ որք եկեալ էին ընդ նմա յԱլանաց աշխարհէ . . . »:

Սուքիասանք Ոսկեանց հետ Ալատաղ եկան, ապա անցան Սուկաւէտ:

«Բառահլայ, ուր եկեալ յԱլանաց դրանէ, և խնդիր